**«ԵՐԵՎԱՆԻ ՄԽԻԹԱՐ ՀԵՐԱՑՈՒ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԿԼԻՆԻԿԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N «ԳՀԾՁԲ-2026/3-ԵՊԲՀ-7»**

ք. Երևան «_____»____________ 20___թ.

**«Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամը**, ի դեմս ռեկտոր **Ա. Ա. Մուրադյանի**, որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և **«ԱԼՄԱՔՍԻՄՄ» ՍՊԸ-ն**, ի դեմս տնօրեն **Գ. Շամիրյանի**, որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

## 1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է **կլինիկական գործունեության համար անհրաժեշտ ծառայությունների** մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

## 2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

**2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝**

2.1.1 Յանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը:

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն:

ա) Չընդունել ծառայությունն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը:

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը:

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին.

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

**2.2 Պատվիրատուն պարտավոր է՝**

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս կողմից մատուցված պատշաճ ծառայության դիմաց վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

**2.3 Կատարողն իրավունք ունի՝**

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու պատշաճ մատուցված ծառայության դիմաց վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

**2.4 Կատարողը պարտավոր է՝**

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության պատշաճ մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

## 3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ»

բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում, Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված **տասն** աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

**4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ**

4.1 Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է **2906300 (երկու միլիոն ինը հարյուր վեց հազար երեք հարյուր) ՀՀ դրամ:**

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է պայմանագրի 3-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում՝ ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված ամիսներին, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

Ընդ որում, գնման դիմաց վճարումն իրականացվում է սույն պայմանագրի վճարման ժամանակացույցով սահմանված ժամկետում, հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

**5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ**

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0.5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում, տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0.05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն սահմանված ժամկետում չվճարված գումարի 0.05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորություններն ամբողջությամբ և պատշաճ՝ պայմանագրով սահմանված պահանջներին համապատասխան կատարելուց:

**6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)**

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը

կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

**Ծառայության մատուցումն իրականացվում է ըստ Պատվիրատուի ներկայացված պահանջի: Եթե պայմանագրի գործողության ընթացքում Պատվիրատուի կողմից գնման առարկայի պահանջը ներկայացվել է ոչ ամբողջ ծավալի համար, ապա գնման առարկայի չմատուցված, մնացորդային ծավալի մասով պայմանագիրը լուծվում է:**

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների, կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի, կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի գրավոր առաջարկի առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի համար ծառայության մատուցման պահանջը չի վերացել, իսկ Կատարողի գրավոր առաջարկը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 7 օրացուցային օր առաջ: Ընդ որում, սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավելի քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման շրջանակներից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին

ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.10 Կատարողն իրավունք ունի պայմանագրի կնքումից հետո Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 48-րդ գլխով սահմանված դեպքերում և կարգով կատարել գնման պայմանագրից ծագող դրամական պահանջի զիջում՝ պահանջի զիջման դիմաց ֆինանսավորման (ֆակտորինգի) պայմանագրի (այսուհետ՝ ֆակտորինգի պայմանագիր) հիման վրա: Ֆակտորինգի պայմանագիրը պետք է սահմանի, որ ֆինանսական գործակալը համաձայն է, որ պայմանագրով նախատեսված հիմքերի առկայության դեպքում Պատվիրատուն վճարումներն իրականացնելիս ապահովի Կատարողի նկատմամբ տույժերի ու տուգանքների հաշվարկումը և հաշվանցումը վճարվելիք գումարների հետ՝ անկախ պահանջը զիջված լինելու հանգամանքից: Ընդ որում, ֆակտորինգի պայմանագրի հիման վրա պահանջի զիջման մասին գրավոր ծանուցումը (հավելված N 4) ստանալու դեպքում Պատվիրատուն պայմանագրով սահմանված վճարումը կատարում է ֆինանսական գործակալին, եթե ծանուցումը ստացվել է Պատվիրատուի կողմից բանկին վճարման հանձնարարական տալու օրվան նախորդող օրը:

7.11 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

7.12 Սույն պայմանագիրը կազմված է **9 (ինը)** էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3, N 3.1 և N 4 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.13 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

**7.14 Պայմանագրով նախատեսված ծառայությունների մատուցումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Ընդ որում, յուրաքանչյուր հաջորդ համաձայնագիրը կնքելու համար ֆինանսական միջոցների նախատեսման համար սույն կետով տրված վեցամսյա ժամանակահատվածի հաշվարկը սկսվում է նախորդ համաձայնագրով սահմանված ծառայության մատուցման արդյունքը ողջ ծավալով պատվիրատուի կողմից ընդունվելու օրվանից: Ընդ որում, Կատարողը համաձայնագիրը կնքում և Պատվիրատուին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից 10 (տասը) աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է:**

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

| | |
|---|---|
| **«ՊԱՏՎԻՐԱՏՈՒ»** | **«ԿԱՏԱՐՈՂ»** |
| **«Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամ** | **«ԱԼՄԱՔՍԻՄՍ» ՍՊԸ** |
| **Հասցե՝ ք. Երևան, 0025, Կորյունի 2** | **ք. Երևան, Տիտոգրադյան 133** |
| **Բանկ՝ «ԱՄԻՕ ԲԱՆԿ» ՓԲԸ** | **«ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ** |
| **Հ/Հ 11500166513800** | **Հ/Հ 163318101991** |
| **ՀՎՀՀ 01503448** | **ՀՎՀՀ 02592894** |
| | **էլ. հասցեն gayane.shamiryan@gmail.com** |
| | **Հեռ. (+37499) 01-77-89** |
| **Ռեկտոր՝ Ա. Ա. Մուրադյան** | **Տնօրեն՝ Գ. Շամիրյան** |
| **(ստորագրությունը)** | **(ստորագրությունը)** |
| **Կ.Տ** | **Կ.Տ** |

Ստորագրող
ԱՐՄԵՆ ՄՈՒՐԱԴՅԱՆ
2007720078

Digitally signed by SHAMIRYAN GAYANE 6714750145
Date: 2025.12.29 12:15:14 AMT

2025-12-29 13:39:26 GMT+04:00
Հավաստված է ԷԿԵՆԳ-ի կողմից

**Հավելված թիվ 1**
**«____»___________________20_____թ. կնքված**
**«ԳՀԾՁԲ-2026/3-ԵՊԲՀ-7» ծածկագրով պայմանագրի**

## ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ-ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

**ՀՀ դրամ**

| Ծառայության | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | տեխնիկական բնութագիրը*** | չափման միավորը | միավորի գինը/ՀՀ դրամ | ընդհանուր գինը/ՀՀ դրամ | ընդհանուր քանակը | մատուցման | |
| | | | | | | | | հասցեն | ժամկետը** |
| 7 | 73111100/503 | Դեղորայքային ալերգենների որոշում | Կից ներկայացվում է | անձ | 6200 | 12400 | 2 | Կատարողի կողմից նշված հասցեում | Կից ներկայացվում է |
| 8 | 73111100/504 | Սննդային ալերգենների որոշում կատեգորիա 1 | Կից ներկայացվում է | անձ | 5200 | 52000 | 10 | Կատարողի կողմից նշված հասցեում | Կից ներկայացվում է |
| 9 | 73111100/505 | Սննդային ալերգենների որոշում կատեգորիա 2 | Կից ներկայացվում է | անձ | 5300 | 53000 | 10 | Կատարողի կողմից նշված հասցեում | Կից ներկայացվում է |
| 10 | 73111100/506 | Սննդային խառնուրդների ալերգենների որոշում | Կից ներկայացվում է | անձ | 6800 | 6800 | 1 | Կատարողի կողմից նշված հասցեում | Կից ներկայացվում է |
| 11 | 73111100/507 | Ալերգենի մոլեկուլային որոշում կատեգորիա 1 | Կից ներկայացվում է | անձ | 6200 | 18600 | 3 | Կատարողի կողմից նշված հասցեում | Կից ներկայացվում է |
| 12 | 73111100/508 | Ալերգենի մոլեկուլային որոշում կատեգորիա 2 | Կից ներկայացվում է | անձ | 8000 | 8000 | 1 | Կատարողի կողմից նշված հասցեում | Կից ներկայացվում է |
| 13 | 73111100/509 | Ինսեկտային ալերգենների որոշում | Կից ներկայացվում է | անձ | 6150 | 2460000 | 400 | Կատարողի կողմից նշված հասցեում | Կից ներկայացվում է |
| 14 | 73111100/510 | Լատեքս ալերգենի որոշում | Կից ներկայացվում է | անձ | 5250 | 21000 | 4 | Կատարողի կողմից նշված հասցեում | Կից ներկայացվում է |
| 15 | 73111100/511 | α գալ ալերգենի որոշում | Կից ներկայացվում է | անձ | 15000 | 150000 | 10 | Կատարողի կողմից նշված հասցեում | Կից ներկայացվում է |
| 16 | 73111100/512 | Տրիպտազա ալերգենի որոշում | Կից ներկայացվում է | անձ | 20750 | 124500 | 6 | Կատարողի կողմից նշված հասցեում | Կից ներկայացվում է |

*Ծառայությունների մատուցման ժամկետը, իսկ փուլային ձևով պայմանագրի կատարման դեպքում՝ առաջին փուլի ժամկետը, պետք է սահմանվի առնվազն 20 օրացուցային օր, որի հաշվարկը կատարվում է պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայմանն ուժի մեջ մտնելու օրը, բացառությամբ այն դեպքի, երբ ընտրված մասնակիցը համաձայնում է ծառայությունները մատուցել ավելի կարճ ժամկետում:

**Ծառայությունների մատուցումն իրականացվելու է 2026 թվականի հունվար-դեկտեմբեր ամիսներին՝ համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագիրն ուժի մեջ մտնելու օրվանից սկսած:

*****Դեղորայքային ալերգենների որոշում (թիվ 7 չափաբաժին)**. Կատարողն իրականացնում է դեղորայքային ալերգենների որոշում: Տվյալ ծառայությունն իր մեջ ներառում է իմմունոկապ մեթոդով արյան միջոցով հետևյալ դեղորայքներից առաջացած ալերգենների որոշումը՝ Պենիցիլին G, Ամպիցիլին, Ամօքսիցիլին: Կատարողը պետք է իրականացնի հետազոտությունը «Հերացի» հիվանդանոցային համալիրից ուղեգրված հետազոտվողների համար: Կատարողը պետք է հետազոտության պատասխանը ներկայացնի առավելագույնը յոթ աշխատանքային օրվա ընթացքում, թղթային և էլեկտրոնային եղանակով, ուղարկելով՝ Պատվիրատուի կողմից տրամադրած էլեկտրոնային հասցեին: Կատարողի ծառայութունների (արյան նմուշառման) իրականացման հասցեն պետք է լինի Երևան քաղաքում:

**Սննդային ալերգենների որոշում կատեգորիա 1 (թիվ 8 չափաբաժին)**. Կատարողն իրականացնում է «Սննդային ալերգենների որոշում կատեգորիա 1»: Տվյալ ծառայությունն իր մեջ ներառում է իմմունոկապ մեթոդով արյան միջոցով հետևյալ սննդանյութերից առաջացած ալերգենների որոշումը՝ հավկիթի սպիտակուց, սոյա, քունջութ, գետնանուշ, պնդուկ, կովի կաթ, նուշ, լոլիկ, խոզի միս, տավարի միս, հավի միս, ձուկ, գազար, նարինջ, ցորեն, ելակ, խմորասունկ: Կատարողը պետք է իրականացնի հետազոտությունը «Հերացի» հիվանդանոցային համալիրից ուղեգրված հետազոտվողների համար: Կատարողը պետք է հետազոտության պատասխանը ներկայացնի առավելագույնը յոթ աշխատանքային օրվա ընթացքում, թղթային և էլեկտրոնային եղանակով, ուղարկելով՝ Պատվիրատուի կողմից տրամադրած էլեկտրոնային հասցեին: Կատարողի ծառայութունների (արյան նմուշառման) իրականացման հասցեն պետք է լինի Երևան քաղաքում:

**Սննդային ալերգենների որոշում կատեգորիա 2 (թիվ 9 չափաբաժին)**. Կատարողն իրականացնում է «Սննդային ալերգենների որոշում կատեգորիա 2»: Տվյալ ծառայությունն իր մեջ ներառում է իմմունոկապ մեթոդով արյան միջոցով հետևյալ սննդանյութերից առաջացած ալերգենների որոշումը՝ հավկիթ, ընկույզ, մանդարին, թուզ, ծմերուկ, գլյուտեն, կիվի, բանան, դեղձ: Կատարողը պետք է իրականացնի հետազոտությունը «Հերացի» հիվանդանոցային համալիրից ուղեգրված հետազոտվողների համար: Կատարողը պետք է հետազոտության պատասխանը ներկայացնի առավելագույնը յոթ աշխատանքային օրվա ընթացքում, թղթային և էլեկտրոնային եղանակով, ուղարկելով՝ Պատվիրատուի կողմից տրամադրած էլեկտրոնային հասցեին: Կատարողի ծառայութեւնների (արյան նմուշառման) իրականացման հասցեն պետք է լինի Երևան քաղաքում:

**Սննդային խառնուրդների ալերգենների որոշում (թիվ 10 չափաբաժին)**. Կատարողն իրականացնում է «Սննդային խառնուրդների ալերգենների որոշում»: Տվյալ ծառայությունն իր մեջ ներառում է իմմունոկապ մեթոդով արյան միջոցով սննդային խառնուրդների ալերգենների որոշումը: Կատարողը պետք է իրականացնի հետազոտությունը «Հերացի» հիվանդանոցային համալիրից ուղեգրված հետազոտվողների համար: Կատարողը պետք է հետազոտության պատասխանը ներկայացնի առավելագույնը յոթ աշխատանքային օրվա ընթացքում, թղթային և էլեկտրոնային եղանակով, ուղարկելով Պատվիրատուի կողմից տրամադրած էլեկտրոնային հասցեին: Կատարողի ծառայութեւնների (արյան նմուշառման) իրականացման հասցեն պետք է լինի Երևան քաղաքում:

**Ալերգենի մոլեկուլային որոշում կատեգորիա 1 (թիվ 11 չափաբաժին)**. Կատարողն իրականացնում է «Ալերգենի մոլեկուլային որոշում կատեգորիա 1»: Տվյալ ծառայությունն իր մեջ ներառում է իմմունոկապ մեթոդով արյան միջոցով օվոմուկոիդի ալերգենի որոշումը: Կատարողը պետք է իրականացնի հետազոտությունը «Հերացի» հիվանդանոցային համալիրից ուղեգրված հետազոտվողների համար: Կատարողը պետք է հետազոտության պատասխանը ներկայացնի առավելագույնը յոթ աշխատանքային օրվա ընթացքում, թղթային և էլեկտրոնային եղանակով, ուղարկելով Պատվիրատուի կողմից տրամադրած էլեկտրոնային հասցեին: Կատարողի ծառայութեւնների (արյան նմուշառման) իրականացման հասցեն պետք է լինի Երևան քաղաքում:

**Ալերգենի մոլեկուլային որոշում կատեգորիա 2 (թիվ 12 չափաբաժին)**. Կատարողն իրականացնում է «Ալերգենի մոլեկուլային որոշում կատեգորիա 2»: Տվյալ ծառայությունն իր մեջ ներառում է իմմունոկապ մեթոդով արյան միջոցով գլիադինի ալերգենի որոշումը: Կատարողը պետք է իրականացնի հետազոտությունը «Հերացի» հիվանդանոցային համալիրից ուղեգրված հետազոտվողների համար: Կատարողը պետք է հետազոտության պատասխանը ներկայացնի առավելագույնը յոթ աշխատանքային օրվա ընթացքում, թղթային և էլեկտրոնային եղանակով, ուղարկելով Պատվիրատուի կողմից տրամադրած էլեկտրոնային հասցեին: Կատարողի ծառայութեւնների (արյան նմուշառման) իրականացման հասցեն պետք է լինի Երևան քաղաքում:

**Ինսեկտային ալերգենների որոշում (թիվ 13 չափաբաժին)**. Կատարողն իրականացնում է «Ինսեկտային ալերգենների որոշում»: Տվյալ ծառայությունն իր մեջ ներառում է իմմունոկապ մեթոդով արյան միջոցով միջատների՝ մեղվի, կրետի, մոծակի խայթոցից առաջացած ալերգենների որոշումը: Կատարողը պետք է իրականացնի հետազոտությունը «Հերացի» հիվանդանոցային համալիրից ուղեգրված հետազոտվողների համար: Կատարողը պետք է հետազոտության պատասխանը ներկայացնի առավելագույնը յոթ աշխատանքային օրվա ընթացքում, թղթային և էլեկտրոնային եղանակով, ուղարկելով Պատվիրատուի կողմից տրամադրած էլեկտրոնային հասցեին: Կատարողի ծառայութեւնների (արյան նմուշառման) իրականացման հասցեն պետք է լինի Երևան քաղաքում:

**Լատեքս ալերգենի որոշում (թիվ 14 չափաբաժին)**. Կատարողն իրականցնում է «Լատեքս ալերգենի որոշում»: Տվյալ ծառայությունն իր մեջ ներառում է իմմունոկապ մեթոդով արյան միջոցով լատեքսից առաջացած ալերգենի որոշումը: Կատարողը պետք է իրականացնի հետազոտությունը «Հերացի» հիվանդանոցային համալիրից ուղեգրված հետազոտվողների համար: Կատարողը պետք է հետազոտության պատասխանը ներկայացնի առավելագույնը յոթ աշխատանքային օրվա ընթացքում, թղթային և էլեկտրոնային եղանակով, ուղարկելով Պատվիրատուի կողմից տրամադրած էլեկտրոնային հասցեին: Կատարողի ծառայութեւնների (արյան նմուշառման) իրականացման հասցեն պետք է լինի Երևան քաղաքում:

**α գալ ալերգենի որոշում (թիվ 15 չափաբաժին)**. Կատարողն իրականացնում է «α գալ ալերգենի որոշում»: Տվյալ ծառայությունն իր մեջ ներառում է իմմունոկապ մեթոդով արյան միջոցով α գալից, տավարի թիրեոգլոբուլինից առաջացած ալերգենների որոշումը: Կատարողը պետք է իրականացնի հետազոտությունը «Հերացի» հիվանդանոցային համալիրից ուղեգրված հետազոտվողների համար: Կատարողը պետք է հետազոտության պատասխանը ներկայացնի առավելագույնը յոթ աշխատանքային օրվա ընթացքում, թղթային և էլեկտրոնային եղանակով, ուղարկելով Պատվիրատուի կողմից տրամադրած էլեկտրոնային հասցեին: Կատարողի ծառայութեւնների (արյան նմուշառման) իրականացման հասցեն պետք է լինի Երևան քաղաքում:

**Տրիպտազա ալերգենի որոշում (թիվ 16 չափաբաժին)**. Կատարողն իրականացնում է «Տրիպտազա ալերգենի որոշում»: Տվյալ ծառայությունն իր մեջ ներառում է իմմունոկապ մեթոդով արյան միջոցով տրիպտազայից առաջացած ալերգենների որոշումը: Կատարողը պետք է իրականացնի հետազոտությունը «Հերացի» հիվանդանոցային համալիրից ուղեգրված հետազոտվողների համար: Կատարողը պետք է հետազոտության պատասխանը ներկայացնի առավելագույնը յոթ աշխատանքային օրվա ընթացքում, թղթային և էլեկտրոնային եղանակով, ուղարկելով Պատվիրատուի կողմից տրամադրած էլեկտրոնային հասցեին: Կատարողի ծառայութեւնների (արյան նմուշառման) իրականացման հասցեն պետք է լինի Երևան քաղաքում:

| «ՊԱՏՎԻՐԱՏՈՒ» | «ԿԱՏԱՐՈՂ» |
|---|---|
| «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամ | «ԱԼՄԱՔՍԻՄՍ» ՍՊԸ |
| Հասցե՝ ք. Երևան, 0025, Կորյունի 2 | ք. Երևան, Տիտոգրադյան 133 |
| Բանկ՝ «ԱՄԻՕ ԲԱՆԿ» ՓԲԸ | «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ |
| Հ/Հ 11500166513800 | Հ/Հ 163318101991 |
| ՀՎՀՀ 01503448 | ՀՎՀՀ 02592894 |
| | էլ. հասցեն gayane.shamiryan@gmail.com |
| | Հեռ. (+37499) 01-77-89 |
| Ռեկտոր՝ Ա. Ա. Մուրադյան | Տնօրեն՝ Գ. Շամիրյան |
| ______________________ | ______________________ |
| ստորագրությունը) | (ստորագրությունը) |
| Կ.Տ | Կ.Տ |

Ստորագրող
ԱՐՄԵՆ ՄՈՒՐԱԴՅԱՆ
2007720078

2025-12-29 13:39:56 GMT+04:00
Հավաստված է ԷԿԵՆԳ-ի կողմից

Digitally signed by SHAMIRYAN GAYANE 6714750145

**Հավելված թիվ 2**
**«____»____________________20_____թ. կնքված**
**«ԳՀԾՁԲ-2026/3-ԵՊԲՀ-7» ծածկագրով պայմանագրի**

## ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

**ՀՀ դրամ**

| Ծառայության | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 20 թվականին՝ ըստ ամիսների, այդ թվում** | | | | | | | | | | | | |
| | | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը |
| 7 | 73111100/503 | Դեղորայքային ալերգենների որոշում | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % |
| 8 | 73111100/504 | Սննդային ալերգենների որոշում կատեգորիա 1 | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % |
| 9 | 73111100/505 | Սննդային ալերգենների որոշում կատեգորիա 2 | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % |
| 10 | 73111100/506 | Սննդային խառնուրդների ալերգենների որոշում | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % |
| 11 | 73111100/507 | Ալերգենի մոլեկուլային որոշում կատեգորիա 1 | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % |
| 12 | 73111100/508 | Ալերգենի մոլեկուլային որոշում կատեգորիա 2 | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % |
| 13 | 73111100/509 | Ինսեկտային ալերգենների որոշում | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % |
| 14 | 73111100/510 | Լատեքս ալերգենի որոշում | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % |

| | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 15 | 73111100/511 | α գալ ալերգենի որոշում | … % | … % | … % | … % | … % | … % | … % | … % | … % | … % | … % | … % | … % |
| 16 | 73111100/512 | Տրիպտազա ալերգենի որոշում | … % | … % | … % | … % | … % | … % | … % | … % | … % | … % | … % | … % | … % |

*Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով՝ ըստ փաստացի մատուցված ծառայությունների: Եթե պայմանագիրը կնքվում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա սույն ժամանակացույցը լրացվում և կնքվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի հետ միաժամանակ՝ որպես դրա անբաժանելի մաս:

**«ՊԱՏՎԻՐԱՏՈՒ»**
**«Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամ**
**Հասցե՝ ք. Երևան, 0025, Կորյունի 2**
**Բանկ՝ «ԱՄԻՕ ԲԱՆԿ» ՓԲԸ**
**Հ/Հ 11500166513800**
**ՀՎՀՀ 01503448**

**Ռեկտոր՝ Ա. Ա. Մուրադյան**

______________________________
**(ստորագրությունը)**
**Կ.Տ**

**«ԿԱՏԱՐՈՂ»**
**«ԱԼՄԱՔՍԻՄՍ» ՍՊԸ**
**ք. Երևան, Տիտոգրադյան 133**
**«ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ**
**Հ/Հ 163318101991**
**ՀՎՀՀ 02592894**
**էլ. հասցեն gayane.shamiryan@gmail.com**
**Հեռ. (+37499) 01-77-89**

**Տնօրեն՝ Գ. Շամիրյան**

______________________________
**(ստորագրությունը)**
**Կ.Տ**

Ստորագրող
ԱՐՄԵՆ ՄՈՒՐԱԴՅԱՆ
2007720078

Digitally signed by SHAMIRYAN GAYANE 6714750145
Date: 2025.12.29 12:17:13 AMT

2025-12-29 13:59:25 GMT+04:00
Հավաստված է ԷԿԵՆԳ-ի կողմից

Հավելված 3
«     »          20  թ. կնքված
ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ
______________________________
______________________________
գտնվելու վայրը ____________
հհ ______________________
հվհհ ____________________

Պատվիրատու
______________________________
______________________________
գտնվելու վայրը ______________
հհ__________________________
հվհհ_________________________

## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
## ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

«     » «          » 20    թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
_____________________________________________________________________________________________
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_________________» 20 թ.
Պայմանագրի համարը՝    _________
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ «    »    «                    » 20    թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

| N | Մատուցված ծառայությունների | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | անվանումը | տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը | քանակական ցուցանիշը | | կատարման ժամկետը | | Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/ | Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/ |
| | | | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | | |
| | | | | | | | | |
| | | | | | | | | |

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց
______________________________
ստորագրություն
______________________________
ազգանուն, անուն
Կ.Տ.

Ծառայությունն ընդունեց
______________________________
ստորագրություն
______________________________
ազգանուն, անուն
Կ.Տ.

Հավելված 3.1
«      »       20  թ. կնքված
ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N
պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _______________-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և ____________-ի
Պատվիրատուի անունը   Կատարողի անունը

(այսուհետ՝ Կատարող) միջև 20   թ. ______________________ -ին կնքված N ______________________
պայմանագրի կնքման ամսաթիվը   պայմանագրի համարը

գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20  թ. __________-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

| Ծառայության | | |
|---|---|---|
| անվանումը | չափման միավորը | քանակը (փաստացի) |
| | | |
| | | |

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

**Հանձնեց**

________________________________
ազգանուն, անուն

________________________________
ստորագրություն

**Ընդունեց**
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

________________________________
ազգանուն, անուն

________________________________
ստորագրություն

Հավելված N 4
«       »             20  թ. կնքված
ծածկագրով պայմանագրի

# ԾԱՆՈՒՑՈՒՄ

____________________________________________ հայտնում է, որ .
ֆինանսական գործակալի անվանումը

1. ____________________-ի և ______________________-ի միջև «--»       20  թ. կնքված
պատվիրատուի անվանումը                    կատարողի անվանումը

«---------/---------» ծածկագրով պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) շրջանակում իր և

____________________-ի   միջև  «--»  20  թ-ին կնքվել է «--------------------» ծածկագրով ֆակտորինգի
կատարողի անվանումը

պայմանագիրը,

2. համաձայն է Պայմանագրի 7.12 կետով սահմանված պահանջներին:

____________________________________________          ______________
ֆինանսական գործակալի անվանումը (ղեկավարի պաշտոնը, անուն ազգանունը)

ստորագրությունը

Կ. Տ. (առկայության դեպքում)

«--»       20  թ.